«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-10/293
«03» «09» 2024թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

«ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա. Մակարյանին
Հասցե՝ ք. Երևան, Գյուրջյան փ. 58/28,
Մյասնիկյան փ. 16/1

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Հարգելի պարոն Մակարյան

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի միջև կնքված 2024 թվականի մայիսի 13-ի «Հայանտառ» ՊՈԱԿ-Ի կարիքների համար շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պետական գնման № ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը ոչ ուշ քան մինչև 2024 թվականի հուլիսի 10-ը, պետք է իրականացներ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ: 2024 թվականի հուլիսի 10-ի N2 Համաձայնագրով պայմանագրի ժամկետը երկարաձգվել է ևս 20 օրացուցային օրով՝ վերջնաժամկետ սահմանելով 2024 թվականի հուլիսի 30-ը ներառյալ:

Աշխատանքները կատարվել են մասնակի և թերություններով, ինչի շտկման համար Պայմանագրի 3.1.2 կետի համաձայն տրվել է ևս 10 օրացուցային օր, սակայն պահանջված աշխատանքները չեն կատարվել:

Պայմանագրին կից ծավալաթերթով նախատեսված աշխատանքերից վերոնշյալ ժամկետներով «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի կողմից պատշաճ կատարվել են միայն հետևյալ աշխատանքները.

Ծառայության տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Մեկ միավորի նախահաշվային գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ
Լամինատե հատակների պատրաստում: Նախապես մանրահատակի պոկված հատվածների ամրացում և հարթեցում: Լամինատը առնվազն A 31 դասի: Լամինատի հաստությունը՝ ոչ պակաս 7մմ, սպունգի հաստությունը՝ ոչ պակաս 3մմ: Գույնը և արտաքին տեսքը պատվիրատուի ցանկությամբ: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված (նոր):	քմ	48	6930.233	332651.2
Պլաստմասե շրիշակներ տեղադրումով: Շրիշակների ամրացում ինքնակպչուն պտուտակներով (Дюбель) 6մմ×35մմ «Կնաուֆ» ֆիրմայի կամ համարժեք: Մեկ հատ շրիշակի չափերը՝ բարձրությունը ոչ պակաս 7սմ և ոչ ավել 9սմ, հաստությունը ոչ պակաս 2սմ և ոչ ավել 3սմ: Գույնը և ձևը պատվիրատուի ցանկությամբ: Շրիշակները պետք է ամրացվեն համապատասխան կցորդներով և անկյունակներով: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված (նոր):	գծ	144	949.3469	136706
Շերտավարագույր իր տեղադրումով՝ ուղղահայաց, հատուկ մշակված կտորից կամ պոլիմերային նյութերից՝ ալյումինե քիվով, պատին ամրացնելու հնարավորությամբ, ստորին հատվածում մետաղական ծանրոցներով և միացման պլաստմասե շղթաներով, տեղաշարժման կարգավորիչներով: Շերտերի լայնությունը՝ 10-13 սմ, գույնը՝ պատվիրատուի ցանկությամբ: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված (նոր):	քմ	37	6645.428	245880.9
Ամբողջ շինաղբի դուրս բերում, բարձում և տեղափոխում համապատասխան աղբավայր սեփական ուժերով և սեփական տրանսպորտով:	հատ	1	28480.41	28480.41
ԸՆԴԱՄԵՆԸ				743718.5

Ծավալաթերթով նախատեսված ներքոնշյալ աշխատանքները կատարվել են թերի, անբավարար և համաձայն պայմանագրի 3.1.3 կետի չեն ընդունվել:

Ծառայության տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Մեկ միավորի նախահաշվային գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ
Ծեփամածիկի ամբողջական սվաղում, հարթեցում, հղկում, 2 անգամ լատեքսային բարձրորակ ներկով ներկում՝ ապահովելով ներկի ամբողջական ծածկողականություն: Գույնը պատվիրատուի ցանկությամբ:	քմ	500	2088.563	1044282
ԸՆԴԱՄԵՆԸ				1044282

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման 02.09.2024 թվականի զեկուցագիրը (կցվում է), պատասխանատու ստորաբաժանման ակտ-արձանագրությունը, պայմանագրի 3.1.4 կետը «Հայանտառ» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի միջև 13.05.2024 թ. կնքված «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պետական գնման № ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 պայմանագիրը՝ նախապես կիրառելով 6.2 կետով նախատեսված տույժերը (6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի չափով:) և 6.3 կետով նախատեսված տուգանքը (6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:) տույժը հաշվարկվելու է մինչև հաշիվ ապրանքագրի դուրս գրումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվը առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը չկատարված աշխատանքի համար կազմում է 110000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ՝ եթե մինչև 2024 թվականի սեպտեմբերի 7-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 110000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ն՝ չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հրավեր 8.14 կետի 2-րդ պարբերություն /սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին/):

Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024 թվականի սեպտեմբերի 9-ը ներառյալ ներկայացնել «Հայանտառ » ՊՈԱԿ-ի գնումների բաժին:

Հարգանքով՝

Սևակ Մարկոսյան

Գնումների բաժին
Մանե Խաչատրյան
094642033

պարոն Սևակ Մարկոսյանին

արտադրության, վաճառքի և տնտեսական բաժնի

պետ Արման Աբրահամյանից

Զեկուցագիր

Հարգելի պարոն Մարկոսյան

Ի լրումն 2024 թվականի օգոստոսի 28-ի Ն/31.11.1/11069-2024 զեկուցագրի տեղեկացնում եմ, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի միջև կնքված 13.05.2024 թվականի № ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 շենք-շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ին աշխատանքների կատարման համար պայմանագրով նախատեսված 20 օրացուցային օրվա ժամկետից բացի 2024 թվականի հունիսի 20-ին կնքված համաձայնագրի շրջանակներում ավելացվել է ևս 20 օրացուցային օր՝ աշխատանքների վերջնական կատարման համար, սակայն այդ ժամանակահատվածում ևս չեն կատարվել աշխատանքները: Աշխատանքները մասնակի և թերություններով կատարելու պատճառով հիմք ընդունելով № ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 համարի պայմանագրի 3.1.2 կետը, թերությունները շտկելու համար տրվել է ևս 10 օրացուցային օր, որի ընթացքում ևս չի կատարվել պահանջված աշխատանքները: Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ վերոնշյալ ժամանակահատվածում «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են լամինատե հատակներ իր պատրաստումով, նախապես մանրահատակի պոկված հատվածների ամրացում և հարթեցումով 48 քմ մակերեսով, 1 քմ-ի արժեքը՝ 6.930,233 ՀՀ դրամ, պլասմասե շրիշակներ իր տեղադրում 144 գծ, 1գծ-ի արժեքը՝ 949,3469 ՀՀ դրամ, շերտավարագույրներ իր տեղադրումով 37 քմ, 1 քմի-ի արժեքը 6.645,428 ՀՀ դրամ և ամբողջ շին աղբի դուրս բերում, բարձում և տեղափոխում համապատասխան աղբավայր սեփական ուժերով և սեփական տրանսպորտով, արժեքը՝ 28.480,41 ՀՀ դրամ ծառայությունները, ընդհանուր արժեքը՝ 743.718,51 ՀՀ դրամ, իսկ մնացած աշխատանքները կատարվել են թերի և անբավարար: Առաջարկում եմ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի միջև կնքված 13.05.2024 թվականի № ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 շենք-շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագիրի շրջանակներում վճարել միայն վերոնշյալ կատարված աշխատանքների դիմաց:

02.09.2024թ. Արման Աբրահամյան

ԱԿՏ - ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ

ք.Երևան 29.08.2024թ.

Մենք, ներքոստորագրողներս՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի արտադրության, վաճառքի և տնտեսական բաժնի պետ՝ Արման Աբրահամյանս, նույն բաժնի տնտեսվար՝ Ժորա Բարսեղյանս և նույն բաժնի փականագործ՝ Նահապետ Հովսեփյանս կազմեցինք սույն ակտն այն մասին, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի միջև կնքված 13.05.2024 թվականի № ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2024/11 շենք-շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են լամինատե հատակներ իր պատրաստումով, նախապես մանրահատակի պոկված հատվածների ամրացում և հարթեցումով 48 քմ մակերեսով, 1 քմ-ի արժեքը՝ 6.930,233 ՀՀ դրամ, պլասմասե շրիշակներ իր տեղադրումով 144 գծ, 1գծ-ի արժեքը՝ 949,3469 ՀՀ դրամ, շերտավարագույրներ իր տեղադրումով 37 քմ, 1 քմի-ի արժեքը 6.645,428 ՀՀ դրամ և ամբողջ շին աղբի դուրս բերում, բարձում և տեղափոխում համապատասխան աղբավայր սեփական ուժերով և սեփական տրանսպորտով արժեքը՝ 28.480,41 ՀՀ դրամ աշխատանքները, ընդհանուր արժեքը՝ 743.718,51 ՀՀ դրամ, իսկ մնացած աշխատանքները կատարվել են թերի, անբավարար և պայմանագրով սահմանված տեխբնութագրին ոչ համապատասխան, որի համար ստորագրում ենք:

Արտադրության, վաճառքի և տնտեսական բաժնի պետ՝ Ա Աբրահամյան

Արտադրության, վաճառքի և տնտեսական բաժնի տնտեսվար՝ Ժ. Բարսեղյան

Արտադրության, վաճառքի և տնտեսական բաժնի փականագործ՝ Ն.Հովսեփյան